

ՎԱՌՆԵՔ ՄԵՐ ՍԻՐՏԸ ՀԻՆՆԵՐՈՒ ԲՈՑԷՆ

Տարիները կը թաւալին աւելի տխուր տեղատուութիւններով, քան մակընթացութեամբ նոր արժէքներու: Կը պակսին շարքերէն դադարին մշակները, որ կ'երթան կորսուելու ժամանակին անդարձ յաւիտենականութեան մէջ, խռովքով կը լեցուինք ապրողներս, յոյսին անդորրիչ բարիքին ուղղած մեր ակնարկները:

Գունատ, մրրկայոյզ Սփիւռքը կ'անօտանայ, ուր գերազանցօրէն անձնագոհուած հայ անհատականութիւններ իրենց յաջորդութեամբ չեն լեցներ ասպարէզը աշխատանքին, եւ լայնածաւալ ու ահաբեկիչ տարածքին վրայ մեր ցրուած անձերու իրականութիւնը համայնակուլ փոթորիկի մը սարսափով կը ցնցէ մեզ: Ու կը փորձուինք յաճախ ներկայէն անցեալին դարձնել մեր տրորուած միտքերը:

Ոսկեդարու մեծութիւններէն առած է միշտ ազգը իր կենսունակութեան աւելը: Հայ տառերու Սուրբին ոգին դարերուն մէջէն թեւածող, սփոփիչ յոյսեր սերմանած է, ցեղին զօրութեանական մղումին շարժումը փոխանցելու համար անհրաժեշտ յաջորդականութեամբ փրկարար սերունդ մը մեր ազգային-մշակութային դաւանանքը դրօշած է դարերու ճակտին վրայ իբրեւ ջահակիրներ, եւ առով է որ կը քալենք տակաւին:

Մեր պատմութեան երկու բեւեռները իրարու միացնել, հեռաւոր եւ մերձաւոր անցեալին հորիզոններէն եկած լոյսին ճառագայթներով տաքնալ մեր ներկայի ցուրտ գօտիներուն վրայ, ըսել է հայ մտաւորականութիւնը եւ ժողովուրդին ազգային դիտակցութիւնը շարունակ բեղնաւորել: Յորեւեանները, զոր տարուէ տարի կը տօնենք, եթէ այս բարիքը միայն ունենային, մեր ինքնամաշ եւ ինքնակործան գոյութիւնը, հայրենիքի սահմաններէն հեռու, պիտի կենսաւորուէր եւ բնաջնջող փոթորիկներու սարսափն ու աւերները պիտի մեղմանային:

Վառենք մեր սիրտը ուրեմն հիններու բոցէն:

Հայ մտքի հորիզոնի վրայ հրդեհ մը բոցավառուեցաւ Ժ. դարուն: Նարեկացին ջահակիր մը չէր լուր Մաշտոցի լոյսին, այլ հրդեհ մը մրրկավարս ու հրաճաճանչ, որուն բոցերը դարերով վառե-

ցին հոգիները, ներշնչեցին ու արեւներով լեցուցին մեր խաւարը, սրբեցին ու առաջնորդեցին բարձրագոյն երկնակամարները հայկական շունչին, սրտին ու քնարին: Այս տարի՝ մահուան 970ամեակին է այս անգուղական աղօթողին եւ բանաստեղծին: Ե. դարէն ասդին, թարգմանիչներու հոյլէն ետք, աստուածաբան-իմաստասէր վարդապետներ եկան օժտելու հայ մտքին երկինքը մինչեւ Նարեկացի, մինչեւ այս սերովբէասարաս միտքը, Հացեկացիի մը հեղեղային ոյժէն վերածնած այս հոյակապ հանճարը: Իր գործը անմահութեամբ պարուրուած՝ ներշնչարանը եղաւ տասնեակ մը դարերու, եւ նոյն թարմութեամբ ու նոյն հոգեշնորհ օծութեամբ եւ միշտ պեղելի անսպառ խորութեամբ, մեր անթարթափ աչքերուն հիացումն է, մեր սէրը, մեր հպարտութիւնը:

Վանայ լիճին աստուածահրաշ սուրբը, հանճարին չքեղ ցոլքովը բռնկած արշալոյսներու եւ վերջալոյսներու նոր գոյներ սփռող իր «Աղօթամատեան»ով, հայ հոգիին եւ հայ վանքերու գեղեցկութիւնը, թող այս տարի ալ մօտէն ներշնչէ դրագէտը, բանասէրը, բանաստեղծը, նոր ստեղծագործութիւններու ոսկեղէն դռներ բանալով եւ զմայլումի ճառագայթադեղ պահեր տալով մեր հոգիներուն համար:

Հարիւր եօթնասուն տարի ետքը՝ Հայկական Կիլիկիան կը վառէր իր երկնակամարէն ուրիշ արեւ մը, Ներսէս Շնորհալին, որ արեգակնափայլ գործունէութեամբ՝ շինարար, կենսատու, ներշնչող հայրապետի եւ մտքի մարդու մը կեանքի աւարտին՝ կ'անցնէր անմահութեան: Հայ ժողովուրդին ցաւովը ապրած անխորտակելի հայ, որ արքունիքին, իշխանական միջավայրին եւ ռամկին բաժնեց իր սիրտը, որ ուժգնօրէն զգաց, ուժգնօրէն սիրեց եւ ուժգնօրէն ալ տառապեցաւ: Այրարատեան դաշտը հեռու էր իրմէ, բայց իր առջեւ բաց էր Միջերկրական ծովի կապոյտ դաշտը, դիւրահաղորդ ճամբայ մը արեւմտեան մտքին հետ հաղորդակցելու, ասիական ծանրութիւններէն եւ քիչ մըն ալ թանձրութիւններէն հեռանալով՝ մեզ կապելու եւրոպական նրբութիւններու, տանելով հայ միտքը իր հընդեւրոպական ակին: Բաց էր եւ դիւրահաղորդ ճամբան, սակայն նախապաշարունակ ամպեր իր նայուածքին լոյսն ու զօրութիւնը կը մըթագնէին յաճախ եւ ցանած ցորենը արտերու վրայ կը դօսանար: Հաւատքի մարդն էր ինքը, կառչեցաւ Գրին, Երզնի՝ հարթելու համար ուղի մը դէպի սրտերու միութիւնը: Հայրապետական Աթոռը, հրեղէն սիւնին պէս վստահութիւն կու տար իր ձեռնարկին, նոր Մեսրոպ մը կը վերածնէր իր մէջ, բանաստեղծ եւ հոգեբան, Գրի պաշտամունքին եւ անոր լուսաշող դերին հաւատացող օրհնեալ մշակ մը, որ հոգէն ընձիւղած կանաչութեան պէս թարմ, աննկուն կեանք մը յաւերժացնելու կամք ունէր:

Գիրը Մեսրոպ-Մաշտոցին համար ազգային դիմադրական միակ զէնքն էր, ապահովութիւնը հայրենիքի սահմաններուն. ան բոլոր ժամանակներու համար կերտած էր միջնաբերդն ու անոր պարիսպները, որպէս ամրութիւն ազգային գոյութեան. իրեն յաջորդողներուն մէջ իր բիւրեղային պայծառութիւններէն ցոլք մը, առոյգ եւ կիզիչ՝ կը նշուէ միշտ հայութեան վրայ: Շնորհալին կը զօդուէ իր անդիմադրելի հրապոյրով, տաղանդին փայլով եւ խօսքին մոգութեամբ սկզբնաղբիւր Մեսրոպեան դարուն: Եւ հոս է մեծութիւնը, անյաղթահարելի ոյժը Գրին, որ գերազանցօրէն միակ իշխողն է մեր օրերուն ալ եւ միակ իրական հրամանատարը: Գրին շուրջ կը դառնան բոլոր միւս տարրերը՝ որպէս ամբողջացուցիչ, գեղեցկացուցիչ, բարձրացնող եւ ազնուացնող: Շնորհալիի շրթներուն վրայ ծաղկած երգը փթթումն էր գրին, որ ժպիտի պէս առինքնող դիւթութեամբ ծաւալեցաւ սրտէ սիրտ: Արշալոյսի առաջին ցոլքերուն հետ Աստուծոյ կապեց զինուորին եւ հողագործին հոգին՝ աղօթքին ճամբով, իբրեւ թրթռացում շնորհքի, փափկութիւններու եւ ազնուական ըզգացումներու: Շարականոցը ոսկեղէն պսակն էր անոր ճակտին, հաւատքին ծաղկումը մտքի դաշտերու վրայ եւ սիրոյ ու յոյսի արփաթեւումներ՝ կապոյտներու ոսկեծիրին վրայ:

Տեսիլքներու պէս լուսահեղեղ բացուած է մէն մի շարական, որու էջերէն աստուածաբանն ու քերթողը կը սլանայ, կը տեսնէ, կը պարզէ մեզի Հայերուս եւ մարդկութեան՝ կեանքի խորհուրդին ծալքերը, անսահմանութեան հրաշապատում դադանքները: Հոգիներու մէջ մէրք կար, եւ մահը դարանած էր չկարծուած անկիւնները. բանաստեղծ հայրապետը կը դնէր մատը վէրքին վրայ, բուժելու համար զայն, կը հեռացնէր դառնահամբոյր մահը, բանալով դռները դրախտին եւ հոգեկան քաղցրութիւններու: Առաքեալ, առաջնորդ երկնատար, քաւիչ եւ սփոփիչ, ինչ որ ահա եղաւ Շնորհալի իր երգերուն ազդեցիկ ներգործութեամբը հոգիներու վրայ, իր ժողովուրդին համար եւ իր յաջորդ զաւակներուն:

Սէ՛ր, եղբայրութիւն, նոր եւ զմայլելի ճառագայթում մը հոգեկան, փայլուն ճարմանդներ աւելցուցած էր իր լուսեղէն դափնեպսակին: Աստուածաբեալ հովիւ Քրիստոսի հօտին՝ լայն բացաւ հորիզոնը աչքերուն, անկողմնակալ հայեացքով ըստ աւետարանական պատգամին՝ դրկելու ժողովուրդներ իր սրտին վրայ: Բիւզանդիոն հիացաւ այդ սրտի մեծութեան եւ հոգիի լայնութեան տիեզերալոյս հրաշքին. Բիւզանդիոնի կայսրը փոքր զգաց ինքզինքը խոր աստուածաբանին, եւ եղբայրութեան ճաճանչով լուսաւորուած հոգիի մը դիմաց: Երկու դմբէթները Կիլիկեան եւ Բիւզանդական եկեղեցիներու՝ ատեն մը հաշտ հայեցան իրարու եւ սիրոյ հրատոյչորումներէն հալեցան բաժանումի սառերը:

Հայնախոհութեան բարձրագոյն օրինակ՝ դրով եւ խօսքով, Շընորհալին երկնահայեաց միտքն էր լուսաւոր յարումով ճշմարտութեան, որ զաղափարական հայրապետի մը մեծ համբաւը կը հիւսէր իր անունին: Ինքնամատոյց ու դիւրապատրաստ՝ հարթելու խոչընդոտները եւ լեցնելու ատելութենէն ստեղծուած պարապները, ըրաւ դիւտը հաշտութեան ծիածանին, դիմելով շեշտակի դէպի անհրաժեշտ ազատագրումը սրտերու թաղաւորութեան: Բարձր իմացականութիւն մը, իմաստութեան եւ սրբութեան զոյգ բարեկնորհ ճառագայթներ, որ իր անձէն կը յորդէին եւ վեհօրէն կը հոյակերտէին իր մէջ մարդը եւ ժողովուրդին նուիրուած անընկճելի եւ անձնանւէր հոգեւորականը, սրտի ու մտքի անհուն բարիք մատուակող քեօ Սպասաւորը:

Ժամանակները ստեղծած էին մեծ անջրպետ մը, որ պէտք էր լեցուիլ իմաստութեամբ եւ սիրով: Այդ ժամանակին մարդն ալ ինքն էր, նախասահմանուածը եւ փորձառուն, բայց իր յանկարծահաս մահը եւ դէպքերու ուրիշ յեղաշրջումներ ու անակնկալներ հեռացուցին կարելին, օգտակարը մեր պատմութեան այդ անկիւնադարձին: Կիրիկեան երկնքին եւ հայ եկեղեցւոյ արեգակը այլեւս ներդրածիչ ոյժ մը չէր, կենդանի, խօսուն եւ դործօն, այլ թելադրող, ներշնչող, դմայելի օրինակ՝ մահէն անմիջապէս ետք: Բնականաբար դործը մըդիչ ուժին պակասէն՝ տկարացաւ, կքեցաւ, յետաձգուեցաւ: Բայց զաղափարը ապրեցաւ եւ կ'ապրի: Ութը դար ետք ուրեմն ան կը նշուէ նոյն ուղիին վրայ, ուրիշ եղանակով, նոր ժամանակներու ոգիով: Ասիկա զաղափարին զեղեցկութեան եւ հմայքին հրաշքն է, որ կը բանայ հորիզոններ, լուսեղէն շրջածիրեր:

Հայ կեանքի եւ պատմութեան մէջ ուրիշ բացառիկ միտք մը, երկու բեւեռները իրարու կապող, մեծատաղանդ, Հայոց նոր պատմահայրը, 150 տարի առաջ, սրտի անբացատրելի կսկիծով կը մեկնէր իր հայ ժողովուրդէն, որուն անցեալին եւ ներկային բովանդակ փառքն ու եղբրականութիւնը ապրած էր դրչով եւ հոգիով:

Մեսրոպեան դարը եւ Խորենացիին շունչն ու ազգասիրութիւնը վերապրող այս մեծահոգի Մխիթարեանը, հայ գրական վերածնունդի լուսաճաճանչ գլուխը, որ նոր ճառագայթներ սփռեց, մթութեան մէջ ճամբաներ բանալու համար, աստուածաբան ու պատմաբան, հիացումի կատար մը ժամանակակիցներու, մէկ կողմէն սիրոյ, համերաշխութեան եւ միութեան զաղափարին ջահակիրը, եւ միւս կողմէն՝ հալածեալ մը եւ վշտակրեալ մը ճշմարտութեան համար: Այդ մարդը Հ. Միքայէլ Չամչեանն էր, որուն դէմքը պէտք է դնել իր պատմական շրջանակին մէջ, իր ժամանակին կրօնական-ազգային հարցերուն ալեծփուն կեանքին մէջ, լաւագոյն կերպով հասկնալու համար զինքը, եւ եթէ անաչառօրէն ուղէք նկատել, պիտի տեսնէք

որ ան հսկայական չափեր կ'առնէ իր կատարած դերով. իր մահէն ետքն ալ ոչ ոք կրցած է իր տեղը բռնել եւ գիտնականի արիւթեամբ փայփայուած զաղափարականը հետապնդել: 1823ին Պոլիս ամփոփեց հողացեալ մարմինը «Պատմահայր» վարդապետին, որ պահեց երկար ատեն հմայքը իր անձնականութեան, եւ «Հրաւէր սիրոյ» առաքելին շունչն ու ոգին ծաւալեցաւ պաշտօնական ու անպաշտօն միջավայրներէն ներս: Իր սիրոյ եւ ազգային համերաշխութեան հրապուրիչ զաղափարը, մնաց որպէս առինքնող զաղափարական եւ գեղեցիկ ներշնչում ու նուիրական ոյժ՝ հոգեկան եւ համազգային արտայայտութեան:

Նոր ժամանակներու հորիզոնին վրայ փայլած, արեւելահայ մտքին ու գրականութեան հիմնադիր՝ Խաչատուր Աբովեան, 1848ին յանկարծ անյայտացաւ. 125 տարի առաջ ուրեմն մառախուղ մը պատեց իր անձը, խորհրդաւոր պարագաներ շրջանակեցին իր լուսաքանդակ դէմքը, եւ մոռցուեցաւ ընտանեկան ցաւի մը մոռյութեան եւ ահաւորութեան մէջ: Չհասկցուած մը եղաւ ան, ըսէք նաեւ հալածուած մը իր բերած նոր զաղափարին եւ շարժումին համար: Ժամանակակիցները չկրցան թափանցել անոր հայրենասէր սրտին խորութեան մէջ եւ ծրագիրները մնացին ամուլ. օտարներ զինքը օգտագործեցին եւ ապա դաւաճանեցին կեանքին: Հայութիւնը իր շունչէն չառաւ կենդանութիւն, որովհետեւ թոյլ չտրուեցաւ իրեն ազատօրէն դործել: Բայց նա սպառեց իր հոգին Հայութեան համար արծարծելու նոր հրդեհ մը սիրոյ, կեանքի, վերելքի եւ մատը ներմուծելով վէրքին վրայ՝ դրեց իր «Ողբը»: Տասնեակ տարի ետք՝ վէրքը դարձաւ վարդը կարմիր հայ գրականութեան: Աբովեաններ ծնան յետոյ իր շունչէն, վիպական դպրոցը շարունակելու, բայց իր հրաբխային ժայթքումը ցաւի եւ գորովի, մնաց անմահ, որովհետեւ ոչ ոք ունեցաւ իր սիրտը: Հայրենիքի մէջ, ինչ միտքարութիւն, այսօր դերադրական բանաստեղծն է ան, ամէնէն հոյակապ ստեղծագործողի վարկով, հայրը ԺԹ դարու գրականութեան ծնունդին: Եւ այդժողի վարկով, հայրը ԺԹ դարու գրականութեան ծնունդին: Եւ խոր համոզումով, պէս ալ հաւատացին սերունդներ, իրաւացի եւ խոր համոզումով, կերտեցին ու պիտի կերտեն միշտ իր փառահեղ յուշարձանի շուրջ ոսկիէ եւ դափնիէ փառապատկներ, միշտ աւելի խորագոյն թափանցումով մը պեղելով իր մէջ մարդը, բանաստեղծը, վիպագիրը, հայրենասէրը: Բազմանկիւն պրիսմակ, ծովացեալ սիրտ, բարձրագագաթ բուրգ, որուն ծայրը կը մխրճի Հայոց կապոյտին մէջ:

Աբովեանի հոգիէն վերածնած ճաճանչ մը, մեր օրերուն կենդանի, բարախուն բանաստեղծութիւնը վիպերգներու ժողովրդականութեամբ, հեքեթունակ պատմող եւ քնարականութեամբ շողջողուն բանաստեղծ, Յովհաննէս Թումանեան, թող այս տարի եւս առարկան ըլլայ բացառիկ կերպով, իր մահուան յիսնամեակին սրբազան

յիշատակին մէջ: Դեռ թարմ են, այո՛, ծննդեան հարիւրամեակին շքեղ տօնախմբութիւնները. բայց իր դէմքին մեծութիւնը թոյլ պիտի տայ դառնալ վերստին իր շուրջը, քննել ու աւելի սիրել, քննել ու աւելի զմայլիլ իր պարզութեան եւ տաղանդին արշալուսային գոյնով: Եզական անշուշտ, որովհետեւ ոչ ոք յաջորդներէն անոր գրաւիչ պայծառութեամբ եւ վճիտ խորութեամբ փնտռեց դեղեցկութիւններու հոգեկան ակերը: Ոչ ոք իրեն պէս ըսաւ. «Հուր եմ դառել՝ լոյս տըւել – Լոյս տալով եմ ըսպառուել» իր ժողովուրդին համար, որուն անմարդկային նահատակութիւնը աչքերով տեսաւ եւ լացաւ անոր հետ, անոր չափ:

Մոռցուած դէմք մըն ալ մեր դիմացը կ'ելլէ, որուն այս տարի կը զուգադիպի ծննդեան 100ամեակը. Արտաշէս Յարութիւնեան, Մալկարայի գրադէտը եւ բանաստեղծը, ինչպէս կոչած են ժամանակակիցները: Պեղուելիք քիչ բան կայ իր մէջ, բայց կայ եւ պէտք է տալ իրեն ալ արդարութեան բաժինը: Գաւառի շունչին անհրաժեշտութիւնը շեշտող, նոյնիսկ պոռագող այս գրադէտը կիսատ թողուց իր գործը, ինչպէս նահատակներու շարքին հերոսատիպ եւ տաղանդաշատ դէմքերը: Բանաստեղծ մը կ'ապրէր անոր հոգիէն ներս, դաւառական կեանքին փարած եւ ներքնահայեցողութեան: Ենթադրեալ ցականի քերթողը կ'ուզէր ըլլալ Մալլարմէի դիմադծով, Մեծարենցի հանդէպ յարգանք տածող, ինքզինքը քիչ մը անոր մէջ ճանչցող եւ զայն պաշտպանող սկիզբէն ի վեր, արժանի պիտի չըլլա՞յ հիմա փըշուր մը յիշատակի:

Միայն իր նահատակութիւնը յանուն ազգային մշակոյթի, իր արիւնին փառապսակովը կը կապէ զինքը մշտնջենաւորութեան հետ հայ մտքին, դարերէն եկած մեծ Ուժի այն հոսանքին՝ որ մեր ազգովին գոյատեւումը կ'անձնաւորէ: Զոհերը յարգանք կը պահանջեն, որովհետեւ նուիրումը սիրոյ գերազանցութիւնն է:

1973ի մոռցիկն յորելինական յիշատակներու այս յորդումը մեր մտքերուն առջեւ՝ չփոթութեան անշուշտ պիտի չմատնէ մեզ եւ ոչ ալ պիտի ծանրանայ բոլոր թերթերուն վրայ պարտականութիւնը՝ իրենց տրիտուրը բերելու բոլորին հանդէպ: Թող իւրաքանչիւրը իր չափին ու սահմանին մէջ ներշնչուի եւ ապրեցնէ դէմքեր զոր յիշեցինք, եւ անոնք՝ զոր չկրցանք յիշել վրիպումով եւ կամ զուտ մասնական դժին, քաղաքական հանգամանքին պատճառով. բայց ատոնք ալ, ո՛ր ասպարէզի վրայ ալ վաստակած ըլլան ի սէր հայրենիքի եւ ազգային գոյատեւման, միշտ արժանի են վերապրելու մանաւանդ Սփիւռքի մէջ, ուր հայութիւնը կ'ապրի եւ կը տառապի, ապաւինած միայն հայ մտքի վառարանէն եկած այն անշէջ հուրին՝ որ մեր ներոյժ գորութիւնն է, դարեր չղթայող: Ատիկա է որ Սփիւռքի մէջ գըլխաւորապէս և բացառիկօրէն կը կազմէ մեր անհրաժեշտ կենսահիւթը:

Պարբերաթերթերուն ուրեմն կ'իյնայ ծաւալել, ծաղկեցնել եւ յաւերժացնել այն որ մեր միակ դանձարանը կը կազմէ, եւ որուն շնորհիւ յաղթած ենք սպառիչ ժամանակին:

Սահմաններու հայրենիքէն զատ եւ անկէ վեր՝ մշակութային գերազանց հայրենիք մը կայ, լոյսով ողողուն, սիրով տոչորուն, մեր ձեռքերէն խլուած հայրենի դեղեցկութիւններէն աւելի ազդուօրէն ներշնչող հոգեկանութիւն մը, որ ամէն տեղ է մեզի հետ, եւ մեր թռչներուն կը բաշխէ սնունդ ու հաւատք, փարումով անցեալ մեծութիւններուն եւ արժէքներուն, մտաւորական տոհմիկ կեանքին, գրաւականը մեր ցեղային անմահութեան:

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ